

սեպհականէն (աստ, 332): Վենետկոյ թ. ԾԹ Մաշտոցին մէջ, որոյ գրութիւնն հնագոյն է քան իւր լրացուցչին 1401 թուականը, աւելի զարդարուն է սոյն կանոնս իւր հրահանգաց մէջ: «Գնեն, կ'ըսէ, ի սեղանն հատ, եւ անապակ գիւնի եւ Գ մով լուցեալս»․ եւ կը պաշտեն հանգստեան շարական եւ օրհնութեան աղօթքը՝ «Գոհանամք եւ փառաւորեմք զքեզ», յորում ուշագրաւ են պարագային հետ կապ ունեցող հետեւեալ տեղիքը: Նախ կը յիշատակէ ննջեցեալները. «Հայցեմք ի բարերարութենէտ քումմէ, յիշեայ զհոգիս ծառայից քոց ընդ սուրբս քո յերկնաւոր առագաստիդ յանպատումն ուրախութիւնսրդ: Հայեաց հաշտ ակամբ ի պատարագս՝ զոր մատուցանեմք առաջի քո, անկարատդ Աճ. եւ պարգեւեայ նոցա զմուտ վերին կենացդ»: Եւ որովհետեւ ոգեհանգիստն ալ կընար մարտիրոսաց յիշատակին հետ կատարուիլ (աստ, 317, '42), կը յարէ այս մտօք. «Ընդունող աղաւթից եւ հաճեցող պատարագաց, նախընտրեալ սրբոց, աղերս արկանեմք առաջի քո զսրբութիւնս նոցա. խոնարհեցո զունկն քո յաղաչանս մեղուցեալ ծառայիս քո... եւ պարգեւեա զհանգիստ յիշատակելոցս առաջի քո»: Կը դառնայ սեղանին եւ անոր